Ինտերնետի ազատ մուտքի կենտրոն

Ինտերնետի ազատ մուտքի կենտրոնը (IATP-Internet Access and Training Program - WWW. iatp. am) արդեն նորություն չէ ոչ միայն մայրաքաղաքի, այլեւ Գյումրիի, Վանաձորի եւ Գորիսի համար:

Վանաձորյան գրասենյակը գործում է Լոռու մարզի հանրապետական գրադարանում, եւ միայն 2000 թ. ընթացքում այստեղ կազմակերպվել են 48 դասընթացներ, 22 սեմինար պարապմունքներ, որտեղ 360 սկսնակների անվճար ուսուցանվել է ինտերնետից օգտվելու հիմունքները, էլեկտրոնային փոստի օգտագործման հմտությունները, ինտերնետում ինֆորմացիայի որոնման համակարգերը: Կենտրոնի շնորհիվ հարյուրավոր վանաձորցիներ արդեն երեք տարի հնարավորություն ունեն ստացած գիտելիքների օգնությամբ կապվել համաշխարհային ինտերնետային ցանցին, պատասխանել ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ հարցերին, նամակագրական կապ հաստատել սփյուռքահայ հարազատների, ընկերների հետ:

Կենտրոնը Արմեն Փոթինյանի ղեկավարությամբ եւ մի քանի նվիրյալ երիտասարդների աջակցությամբ, ստեղծել եւ ինտերնետային ցանցում տեղադրել է էջեր՝ նվիրված Հայ Առաքելական եկեղեցուն, մի շարք հասարակական կազմակերպությունների: Վանաձորը ինտերնետում ներկայացնում է Ստեփան Զորյանի տուն-թանգարան, հանրապետական գրադարան, «DRO» կարատեի մարզական ակումբ, «hAVELI» ռոք խումբ, «Ինտերկապ» ռադիո- եւ հեռուստակենտրոն էջերով: Աշխարհի մանուկներին է ուղղված «Հայկական ժողովրդական հեքիաթներ» էջը: Թվարկվածը դեռեւս խոստումնալից սկիզբն է, իսկ ամբողջական նպատակը Հայաստան աշխարհը, Լոռու մարզը եւ Վանաձոր քաղաքը աշխարհին ներկայացնելն է:

ՀՐԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ